

հոգագնդի վերայ տակաւին կը գտանուի և ինձ մի տեղի, ուր կարող էի գլուխս խոնարհեցնել և ապրել խաղաղութեամբ: Եւ մի գործ ևս գտանել ինձ անհնարին չէր:

Շատ ուրախ եմ, որ էմինը այսուհետև պիտի լինի Հայոց լեզուի և դպրութեան պրոֆեսսոր Լազարեանց դպրոցում. ևս չեմ նախանձում նորա բաղդատորութեանը այլ ցանկանում եմ նորա առաւել ևս բաղդատորութեանը: Գուցէ նա աւելի պտղաբեր լինի այդ պաշտօնում, քան թէ ես:

Իւրք գրումէք ինձ, թէ շատ բան ունէիք ինձ գրելու. գրեցէք համարձակ, առանց խեթալու, մի գուցէ ինձ ձանձրութիւն կը պատրաստէիք: Եւ Ձեր նամակները, որչափ ևս երկար լինելին, միշտ քաղցր և ախորժելի կը լինին ինձ համար:

Ոչինչ լսում չեմ մեր բարեկամ Տէր Յարութիւնի և Շախազիզեանի մասին. խնդրեմ մատուցանել նոցա իմ բարեկամական ողջույթը:

Իմ ամուսինը, Երեսույքը և փոքրիկ Էմանուէլը ուղարկում են Ձեզ շատ կարօտով և սիրով ողջոյն և մաղթում են Ձեզ յատուաժուստ ամենայն հոգեւոր և մարմնաւոր բարիք:

Բարեւո՛ւ մնաք ի տէր, և քաջանաւատ առ յարգանքը և սէրը զՁեզ անփոփոխ հաւատարմութեամբ սիրող և յարգող բարեկամի:

Ս. ՆԱԿԱՐԵԱՆԿ.

Վ. Ա. Արուիս.

28 նոյեմբ. 1915 թ.

Յ. Տէր Յակօվբեանց.

### ԻՍՐԱՅԷԼԱՅՈՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆԸ

Բրիտանէական կրօնի աղբիւրը, որից բղխել տարածուել են անհուն սիրոյ, կատարեալ վեհութեան, բացարձակ բարութեան և այլ անսահման վսեմ գաղափարներն ու հասկացողութիւնները— այդ Իսրայէլն է, եհնավէի ժողովուրդը, ընտրեալ սակայն բազմաչաքշար ժողովուրդը, որի Մուղիկայի մասին պէտք է լինի մեր խօսքը:

Իր տոկոճութեամբ, կրօնական ջերմեանդութեամբ և ազգային պահպանողականութեամբ մի գարմանալի ժողովուրդ է Իսրայէլը: Մինչդեռ պատմական ու յաղթական եգիպտոսը, կլասիքական Հռովմն ու Յունաստանը, Փիւնիկէն, Լիբովպիան, Ատրեստանը, Միդիան, Լիդիան, Խալդէան և այլն չբացեցել են, Իսրայէլն այնուամենայնիւ պահպանել է իր գոյութիւնը...

Մինչդեռ հին ազգերն իրենց եռանդը սպառել են նիւթական յուշարձաններ կանգնելու համար, Իսրայէլն իր յիշատակն ու ազգային ինքնուրոյնութեան հիմքը դրել է հողեկան, լիրիկ ու բարոյական օրիժինալ պահպանողականութեան վրայ: Իսրայէլից ծագեց արդարութեան արեգակը, երկրագնդիս կիսից աւելի բնակիչների մատուր բարոյական լոյսը, սակայն Իսրայէլն ինքը, որն աղբիւրն է այդ լուսաւորութեան, մնաց հարազատ իր հնաւանդ, պապերի, Աստուծոյ զաւակների՝ Արրահամի, Յակոբի և Մարգարէների թողած ժառանգութեան:

Քրիստոնեայ և լուսաւոր ազգերի կրօնական-բարոյական հասկացողութիւնները կոփվել են Իսրայէլի պատմագրութեան վրայ: այդ ժողովրդի պատմագրութիւնը սուրբ է համարուել և աստուածային: Զանազան ժամանակների և զանազան ազգերի մտաւորականութեան և բարոյականութեան ռաւիլիրաներն ու կոլումները իրենց դատերը պահանջել են սուրբ գրքի օրէնքներով: աշխարհիս բոլոր լուսաւոր ազգերն ու մարդիկ ուսել են Իսրայէլի պատմութիւնը՝ աստուածաշունչը: մինչև այժմս էլ քրիստոնէական եկեղեցու կամարների տակ հնչում է և կը շարունակէ հնչել Իսրայէլ անունը:

Ամենահին ժամանակներում, երբ բոլոր մնացած ժողովուրդները պաշտում, երկրպագում էին քարին ու փայտին, իրենց ձեռքով շինած կուռքերին, Իսրայէլն էր, որ առաջինն ըմբռնեց միաստուածութեան արտրակտ զազափարը, Իսրայէլի խորն ու զգայուն հողին էր, որ կարողացաւ ճանաչել վերացական Աստուծուն, տիեզերքի Տիրոջ, ոգևորուել Նրանով և հրաշքներ կատարել Նրա անունով:

Նրա ոգևորութիւնն ու հաւատը դէպի անշօշափելի և վերացական էակը չէր կարող թաղնուած ու զսպուած մնալ, և այն արտայայտուեց Իսրայէլի բանաստեղծութիւնների մէջ. սաղմոսի՝ հրէական ամենից նշանաւոր և տարածուած երաժշտական գործիքի միջոցով:

Սաղմոսով Իսրայէլն արտայայտել է իր վիշտն ու ուրախութիւնը Բարձրեալին. սաղմոսը եղել է միջնորդ Իսրայէլի և Նահվէի միջև: Այդ սաղմոսներն այժմ թարգմանուած են աշխարհիս վրայ գոյութիւն ունեցող բոլոր լեզուներով, որոնք գիր ու գրականութիւն ունին. և նոցա մտքի ու իմաստի խորութիւնը պարզաբանելու և բացատրելու համար շատ նշանաւոր գիտնականներ են խորհել ու աշխատել:

Սաղմոսները բոլոր քրիստոնէական ժողովուրդների համար, առանց դաւանական խտրութեան, ընդունուած են իբրև կրօնական պաշտամունք:

Եւ այդպէս, ինչպէս տեսնում ենք, այդ ժողովուրդը կրօնական տեսակէտից մեծ ազդեցութիւն է ունեցել բոլոր քրիստոնեայ ժողովուրդներէ վրայ. դրա պատճառն այն է, որ ոչ մի ժողովուրդ Աստուծոյ, իբրև վերացական զօրութեան կամ հոգու էութիւն այնքան խորը և անկեղծօրէն չէ բմբունել, որքան Իսրայէլը իր Աստծուն. Որի ընտրեալ ժողովուրդն է եղել նա, որի պատգամները եղել են նրա օրէնքները: Այդ օրէնքները սուրբ են եղել, նոցա պահպանութեան համար են նշանակուել թագաւորները, որոնց գահակալութեան տեսականութիւնը չափուում էր Ենովայի օրէնքների պահպանութեան աստիճանով: Նրանց թագաւորը ամեն բոլորէ կարող էր զրկուել իր գահից, եթէ Աստուծոյ բարկութիւնը շարժէր, և ամեն մի հասարակ հովիւ կարող էր թագաւորութեան կոչուել, եթէ Եհզիբի ողորմածութեանն արժանանար:

Այդ ժողովուրդը, որի ամբողջ օրէնսդրութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կրօնական, ծիսական, աստուածապաշտական սովորութիւնների և աւանդութիւնների ժողովածու, իր Մուզիկան ևս հիմնելու շարկապել է կրօնի հետ: Եւ այդ այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև բոլոր հին ժողովուրդները, իբրևց երաժշտութիւնը կապել են կրօնի հետ, նոյնը աւելի զօրեղ չափով արտայայտել է Իսրայէլը:

Եւ իրօք, մենք նրա Մուզիկան շարունակ հանդիպում ենք իր կրօնին զուգընթաց:

Անշուշտ հետաքրքրական կը լինէր իմանալ, ունեցել է արդեօք այս զարմանալի ժողովուրդը Մուզիկայ, ինչպէս է նա ընդունում Մուզիկայի ծագումը, ունեցել են նոքա արդեօք երաժիշտներ, երաժշտական գործիքներ և ինչպիսի, որքան է տարածուել Մուզիկան նոցա մէջ, և ինչ դեր է խաղացել, կամ ձրպիսի տեղ է գրաւել այն նոցա կուլտուրական կենցաղի մէջ: Այդ բոլորի մասին կարելի է որոշ չափով տեղեկութիւններ ստանալ և մօտաւոր զազափար կազմել նրանց զբաղանութիւնից և Իսրայէլի կրօնական պատմութիւնից՝ ս. Գրքից և Աստուածաշնչից:

Բացի Աստուածաշնչից նրանց մնացած զբաղանութեան մենք լաւ ծանօթ չենք, ինչպէս, օրին. Թալմուդին, Միշնայի, Միդրաշին, և որովհետև նրանք այնքան ընդհանրացած և հանրածանօթ չեն, ինչպէս ս. Գիրքը, ուստի և ես իմ ունկնդիրներէս համբերութիւնը պէտք է շահագործեմ այդ գրքի մի քանի հետաքրքրական և կարևոր վկայութիւնների ընթերցումով, որոնք մեզ ծանօթութիւն են տալիս այդ ժողովրդի երաժշտութեան մասին:

Իսրայէլը իր երաժշտութեան ծնունդն էլ բացատրում է Մենդոց գրքում, Գ. 20—21.

«Եւ ծնաւ Ադդա զՅովբէլ. նա է հայր այնոցիկ, որ բնա-

կեալ են ի վրանս խաշնարածաց, և անուն կըբօր նորա Յովբաղ նա է այր, որ եցոյց զերգս և զքնարս»:

Ինչպէս այս վկայութիւնից է երևում, խորայնացիք Յովբաղին համարում են առաջին երածիշարը, որը ծանօթացրել է նրանց երածշտութեան, նա է կղիլ այն մարդը, որը ցոյց է տուել նրանց կրգերն ու քնարը: Այստեղ բացատրում է, ուրեմն, նրանց երածշտութեան ծագումը:

Ելից զըբի մի վկայութեամբ հաստատում է, որ երածշտութիւնն այն աստիճան տարածուած էր այդ ժողովրդի մէջ, որ կանայք անգամ հրապարակով նուագում էին. գլ. ժԵ. 20, 21.

«Եւ առ Մարիամ մարգարէ՝ քոյրն Ահարոնի զթմրուկն ի ձեռն իւր, և ելին ամենայն կանայք զհետ նորա թմրկօք և պարուք. [և յառաջէր Մարիամ և ասէր. «Օրհնեսցուք զՏէր զի փառօք է փառաւորեալ զերիվարս և զհեծեալս ընկեց ի ծով].

Հրէաները առհասարակ ունէին մեծ համարում երածշտութեան նկատմամբ, նորա մարգարէական շնորհքը նոյնպէս կապում էին երածշտութեան հետ.

Թագաւորութեանց I §. Սամուէլն ասում է Սաուդին.

... «Եւ ապա մտցես ի բլուրն Աստուծոյ, ուր է զունդ ալազգեացն, և եղիցի յորժամ մտանիցես ի քաղաքն, զիպեսցես պարու մարգարէից իջելոց ի Բամայ և առաջի նոցա սրինդ և՛ փող և՛ քնար և ինքեանք մարգարէացեալք»:

Յայտնի է եղիպտոսի այն համոզմունքի մասին, որ Սուրբկան վանում է չար ոգիները. հրէաները՝ երկար տարիներ ապրելով Եգիպտական լծի տակ, ուրիշ սովորութիւնների հետ միասին իւրացրել էին և այն համոզմունքը, որ երածշտութիւնը հանգըստացնում է մարդկանց, հալածելով նրանց մէջ բուն դրած չար ոգիները, իջնցնում է բարկութիւնը և հողեկան հիւանդների բժշկութեան համար ամենազօրեղ միջոցն է. այդ երևում է Աստուածաշնչի Թագաւորութեանց I գրքի ժԳ 14—23.

«Եւ հոգի Տեառն վերացաւ ի Սաուդայ և խեղդէր զնա այս չար ի Տեառնէ: Եւ ասեն ցնա ծառայքն իւր Ահա այս չար ի Տ'անէ խեղդէ զքեզ. խնդրեսցուք այր մի, որ զիտիցէ երգել քնարաւ. և եղիցի ի հասանել ի վերայ քո այսոյն չարի որ յԱստուծոյ՝ երգեսցէ քնարաւն և զիւր լիցի քեզ և հանդուսցէ զքեզ: Եւ ասէ Սաուդ ցճառայսն իւր. «Տեսէք ինձ այր մի, որ բարուք երգիցէ, և ածէք զնա առ իս. պատասխանի ևտ մի ոմն ի մանկաւոյ նորա և ասէ. Ահա տեսի զորդի Յեսսեայ զբեթղեհեմացի զիսէ սաղմոս, այր գեղեցիկ տեսեամբ և Տէր ընդ նմա...»

«Եւ եմուտ Դաւիթ առ Սաւուղ . . . և լինէր յորժամ հասանէր այսն չար ի վերայ Սաւուղայ, առնոյր Դաւիթ զքնարն և նուագէր ձեռամբ իւրով հանգստեցանք և զՍաւուղ և զիւրանայր նմն և մեկնէր ի նմանէ այսն չար»:

Նշանակալից է այն հանգամանքը, որ հրէաները իրենց կրօնական արարողութիւնները կատարում էին նաև երաժշտական գործիքների նուագակցութեամբ. | Մնացորդաց գրքից. ԺԳ. 7—8

«Եւ եղին գտապանակն ի վերայ սայլի նորոյ, . . . և Դաւիթ և ա՛մ Իս՛ր. խաղային առաջի ա՛մոյ և ա՛մ զօրութեամբ. երգովք սաղմոսաց. տաւղօք և քնարօք և թմբիօք և ծնծղայիք և փողովք:

Աստուածաշնչի | Մնացորդաց գրքի մի քանի վկայութիւնների շնորհիւ մենք ծանօթանում ենք Իսրայէլի համարեա ամբողջ օրկենսորին և նրանց նշանաւոր երաժիշտների հետ:

16, 19—22, 24, 27, 28, 29.

«Եւ սաէ Դաւիթ ցիշխանն Ղևտացոյն. կացուցէք զեղբարսն ձեր, որք երգեն զսաղմոսս նուագարանօք երգոցն, քնարօք և սրնգօք և ծնծղայիք, ամբառնալ զձայնս ի բարձունս ուրախութեան ձայնիւ:

«Եւ սաղմոսաւնուագեն՝ եման և Ասափ և Եթան տաւղօք պղնձօք, լսելի առնել զձայնն»:

Այստեղ, ուրեմն, բացատրուեց, թէ ովքեր են սաղմոսանուագները: Շարունակութեան մէջ յայտնում է քնար նուագողների անունները . . .

«Ջաբարիա և Աղիէլ և Սամիրամովթ և Եքիէլ և Անուհիաս և Եղիար և Մասիաս և Բանիա՝ քնարօք . . .»

Այնուհետև յիշում է սրինգ նուագողների անունները.

«Եւ Մատթիաս և Արիդովմ և Յեէլ և Ողիաս՝ սրնգօք Սենեթիաս զօրացուցանել»:

Ապա յայտնում է գիրիժօրի կամ երաժշտական խմբի ղեկավարի անունը.

«Եւ Բոնենիաս իշխան Ղևտացոցն՝ իւխան ի վերայ երգոցն վասն զի էր հանձարեզ»:

Նշանակալից է այն, որ Ղևտացիների իշխանը՝ է նաև երգոց իշխան, խմբապետ—կզրակացութիւն, —երաժշտութիւնն այն աստիճանի յարգի էր, որ իշխանները խումբ էին կառավարում:

Նրանց մէջ քահանաներն անգամ նուագում էին և նրանց յանձնուած էր փողերը.

«Եւ Սովբենիաս և Յովսափատ և Նաթանիէլ և Ամիսայի և Ջաբարիաս և Բանիա և Եղիազար քահանայքն յուսուցեալք փողովք առաջի տապանակին Աստուծոյ . . .»

«Բարձին զտապանակ ուխտին Տեառն և սաղմոսանուագքն և Քոնհնիսս էր իշխան երգոցն, որք նուագէին . . . և ա՛մ Իսրայէլ հանին զտապանակ Տեառն հոչակաւ ձայնիւ յորիւեան շեփորաւ և փողով և ծնծղայիւք, նուագելով քնարօք և տաւղօք:

Այս ցիտատից պարզ երևում է, որ Իսրայէլի մէջ մի երաժշտական ցեղ կար, յատկապէս ղևտացիներինը, որ օժտուած էր երաժշտական արուեստի տաղանդով: Պարալիպեմնոնի մնացած վկայութիւններով միանգամայն հաստատուում են այս կարծիքները:

Ես այժմ մատնանշեմ մի ուրիշ հատուած այս գրքի ե. գլխից, որտեղ ի միջի ալլոց նշանակալից է և այն հանգամանքը, որ կրօնական ծիսակատարութեան ժամանակ բեհեզիայ պատմուճանս կամ շապիկ հագնելու սովորութիւնը նրանց մէջ ևս գոյութիւն ունէր, ինչպէս մեր մէջ եկեղեցիներում յատկապէս նշանաւոր տօներին:

Գիրք II Մնաց. ե 12, 13.

«Եւ ղևտացիքն սաղմոսանուագք, ամհնեքեան յորդուցն Ասափայ և Եմանայ և Իդիթունայ և յորդուցն Նոցա և եղբարցն Նոցա, որք զգեցեալ էին զպատմուճանս բեհեզիղէսս, և տաւղօք և քնարօք և սրնօք կային յարեւից կողմանէ սեղանուցն, և ընդ նոսա քահանայք հարիւր և քսան՝ հարկանէին փողս, և եղև միանգամայն ձայն ի հարկանել զփողսն և յերգել զսաղմոսն և ամբառնալ զձայնսն միարան ասելով՝ խոստովան եղերուք և օրհնեցէք զՏէր. և բարձրացուցին զձայնսն փողովքն և ծնծղայիւք և զսրծեօք երգոյն և ասացին խոստովան եղերուք տեառն զի յաւիտեան է ողորմ նորա և տունն լցաւ ամպով փառացն տեառն»:

Եթէ այս բոլորի վրայ աւելացնենք և Եղբի II գլխի մի կտորը 41.

«Եւ որ էին սաղմոսասացք և երգեցիկք, որդին Ասաֆայ՝ հարիւր քսան և ութ»

Նոյն գլխի մէջ յիշուած մի ուրիշ վկայութիւն (65)

«Եւ երգիչք սաղմոսաց Նոցա արք և կանայք երկերիւր»,

Եթէ ի նկատի առնենք նաև Փլաբիոս Իօզէֆուսի հրէական պատմութեան գրքի մէջ բերած այն տեղեկութիւնը, որ Մովսէսի տուած օրէնքների համաձայն նրանց տաճարում կար 200,000 փող և տրօմբօն, և որ Սողոմոն իմաստունը երգիչների համար պատրաստի ունէր 20,000 բեհեզիայ պատմուճաններ, և որ նրա ժամանակ տաճարն ունէր 40,000 քնար, այս բոլորի մասին լսելուց յետոյ, եթէ նոյն իսկ ենթադրելու լինենք, որ այդ բոլորը մեծ չափազանցութիւններ են, այնուամենայնիւ կը մնայ մեր մէջ

այն համոզմունքը, որ Իսրայէլը ամենախոշոր տեղն է ունեցել յատկացրած Մուզիկային իր կրօնական, ազգային և հասարակական կենցաղի մէջ:

Եթէ այստեղ թուելու լինենք այն բոլոր վկայութիւնները ա. Գրքի և նրանց այլ նշանաւոր պատմիչների գրածներից, երկար կը տէր այդ բոլորը և մենք անկարող կը լինէինք սպառելու այդ բոլոր տեղեկութիւնները: Մանաւանդ սաղմոսները վերին աստիճան առատ են հրէական երաժշտութեան վերաբերեալ դարձուածքներով: Սղմ. ձԾ. կր. 3.

... Օրհնեցէք զնա ի ձայն փողոյ, օրհնեցէք զնա ի տա-  
ւիղ և ի քնար, օրհնեցէք զնա թմբկաւ և պարուք, գովեցէք  
զնա դաննազիւ և սրնգաւ. օրհ. զնա ի բարբառ ծնծղայից,  
օրհ. զնա ծնծղայիւք ցնծութեան և այլն:

Սակայն Մուզիկան միայն նրանց կրօնական կեանքում չէ, որ գործադրուել է, այլ և պէտք է յիշել այստեղ, որ այն եղել է նաև նրանց ուրախութիւնների, խնջոյքների և զանազան ճաշկե-  
րոյթների զարգը:

Թող թոյլ տրուի ինձ այդ ապացուցելու համար յիշել Ծնըն-  
գոց գրքի ԼԱ. զլխից (26, 27,) մի փոքրիկ կտոր.

«Եւ ասէ Լարան ցՅակոր. . . ընդէր գաղտաղնաց եզեր  
յինէն, վարեցեր զգոտերս իմ իրբև զգերեալս սրոյ, և եթէ  
աղղ արարեալ էր ինձ, առաքէի զքեզ ուրախութեամբ և  
արուեստականօք թմբկաց և քնարաց»:

Իսկ Եսայի մարգարէն ուղղակի ասում է (զլ. Ե. 12) «..Փո-  
ղովք և թմբկաւ և քնարաւ և երգովք զգիրնին ըմպեն և ի գործս  
տեառն ոչ հայեն. . .» և այլն.

Մտում է մատնանշել երաժշտութեան դերը նրանց տիրու-  
թեան օրերին. զորս համար ամենայարմար աղբիւրն է 136 կամ  
137 սաղմոսը. որտեղ նկարագրուած է Իսրայէլացիների գերու-  
թիւնը Բաբելացւոց ձեռքին, և որը շատ երաժշտագէտների համար  
ծառայել է որպէս օրիժինալ նիւթ Իսրայէլի Մուզիկայի հարազա-  
տօրէն արտայայտութեան համար:

«Առ գետս Բաբելացւոց անդ նստէաք և լայաք, որպէս  
յիշեցաք մեք անդ զՍիւոն. ի մէջ ուռեսաց նոցա կախեցաք  
զքնարս մեր, անդ հարգանքիև գերիչք մեր վբանս օրհնու-  
բեան<sup>1)</sup>. Գերեվարք մեր ստիպէին զմեզ և ասէին. օրհնեցէք  
մեզ յօրհնութենէն Սիւոնի: Իսկ զիմարդ օրհնեսցուք զօրհնու-  
թիւնս տեառն յերկիր օտար. . .»

1) Այսինքն խնդրում էին երգել.

Այս բոլորից յետոյ միանգամայն աներկբայ պէտք է լինել, որ հրէաները ունեցել են հնումը Մուզիկայ, ունեցել են նոքա իրենց երաժիշտները, երաժշտ. գործիքները օրկեստրը, կազմակերպուած խոր և այլն. Մակայն մնացել է մինչև օրս արդեօք այդ Մուզիկան— բաւական կատակածիլի է: Ներկայումս օրինակ, հրէական սինագոգներէ երգեցողութիւնը շատ տարբերում են իբրբից և զուրկ են միակերպութիւնից. սակայն միւս կողմից այն հանգամանքը, որ հրէական բոլոր երգերն ու եղանակները կրում են այդ ժողովրդի բնաւորութեան և ոգու սպեցիֆիկ ազդեցութիւնը, և որ այնպիսի եղանակներ կան, որոնք միմիայն հրէային են ամբողջապէս համակում և էքստազի հասցնում՝ կարող են ծառայել իբրև ապացոյց նոցա երաժշտական օրիժինայութեան և նրա պահպանմանը: Եթէ հրէական երաժշտութիւնը ինքնուրոյն չը լինէր, այդ ազդեցութիւնը յատկանշէ հրէաների վրայ նա չէր՝ ունենայ:

Սրան պէտք է կցել և այն, որ Իսրայէլն ընդունում էր երաժշտութիւնը որպէս աստուածային, իսկ ինչ որ այսպէս թէ այնպէս Աստուծոյ անուան հետ առնչութիւն է ունեցել, ապա այն նրանց համար սուրբ և անկապտելի սեպհականութիւն է եղել: Այդ տեսակէտից թոյլ եմ տալիս ինձ կարծելու, որ հրէական երաժշտութիւնն էլ իբ որոշ ինքնուրոյնութիւնը պահպանած կը լինի: Հրէաները ունեցել են նաև իրենց (հին հրէական) ձայնագրութեան նշանները ձայնանիշները, մինչև 25 հատ, այդ ձայնանիշներից իւրաքանչիւրը ունեցել է մի քանի ձայների նշանակութիւն. եւրոպական նոտագրութիւնը գրուպպետօ ՝ նշանը փոխ է առել հին հրէական ձայնագրութիւնից:

Այժմեան հրէական Մուզիկայի ընդհանուր բնաւորութեան մասին կարելի է յիշել, որ այն տիպիկ արեւելեան է: Նրանց եղանակները չնչին բացառութեամբ վերին աստիճանի տխուր և սրտաճմլիկ երգեր են, որովհետև զրանք հալածանքի և տխրութեան օրերին կրած անվերջ տառապանքի արտայայտութիւններ են, նոքա համարեա ուրախ երգից զուրկ են, որովհետև վաղուց է, որ նրանք ուրախ օրեր բնաւ չեն տեսել: Մի երևոյթ, որ նրանց երաժշտութիւնը շատ օրիգինալ է զարձնում մնացած բոլոր ազգերի Մուզիկայից, այդ նրանց առանց բառերի երգն է, որը նրանք գերադասում են երաժշտական մնացած ձևերից: Առանց բառերի երգերը նրանց ամենասիրելի եղանակներն են, սքանչելի մեղեդիներով, որոնք նկարագրում են աղերսանք և մխիթարութիւն, հարց ու պատասխան և հոգեկան բուռն զեղումների քնքուշ արտայայտութիւն: Այս տեսակի երգերից նշանաւոր երաժշտագէտ իսրայելեացիները կ'ընդունու 10 երգ հիւսցնելու չափ վարպետօրէն զեղարուեստական մշակման է ենթարկել:

Եթէ դիտելու լինենք հրէական Մուզիկայի այժմեան դրու-  
թիւնը, կը տեսնենք, որ նոցա երգերն ըստ բովանդակութեան և  
եղանակների զանազան կատեգորիաների են վերածուած.

I Օրորներ, որոնք տխուր և լիբիկ լինելով՝ ամենատարած-  
ուած երգերն են նրանց մէջ:

II Մանկական երգեր, որոնք աղքատ են թէ քանակով և թէ  
որակով. այդ իրողութիւնը բացատրուած է այն հանգամանքով, որ  
հրէաները իրանց մանուկներին ոչ թէ մանկական երգեր են սո-  
վորեցնում, այլ հէնց սկզբից և եթ նրանց ձեռքը տալիս են Աս-  
տուածաշունչ և թայմուդ:

III Սիրային երգեր. — բառի բուն մտքով այդպիսի երգեր  
հրէաները չունին, որովհետև արևելեան սովորութեան համաձայն  
նրանք իրենց զաւակներին անշարժաճանա ամուսնացնում են. յաճա-  
խակի տեղի ունեցող իրողութիւն է նրանց մէջ 10—12 տարեկան  
հասակ ունեցող գոյգերին ամուսնացնելը: Այնպէս որ սիրային  
երգեր անունով իսկապէս գոյութիւն ունեն միայն երգեր նշանածի  
կամ հարսնացուի մասին:

IV Զինուորական երգեր. — որոնք երգուած են 3 լեզուներով. —  
հին հրէական լեզուով, ասորէն և ժարգոնով. զինուորական կոչուած  
երգերը խառն և զանազան բնոյթ կրող երգեր են:

V Իւժօրիասական երգեր, որոնցով հրէայ ժողովուրդը հեգ-  
նանքի առարկայ է դարձնում հէնց իր սպիտութիւնը:

Կան միքանի ուրիշ տեսակի երգեր ևս:

Առհասարակ նոցա երաժշտական երգերը գեղարուեստական  
երաժշտութեան համար կարող են ծառայել, որպէս անսպառ և առատ  
աղբիւր, որից օգտուել և օգտուած են շատ երաժշտագէտներ:

Պէտք է խոստովանել, որ հրէաները մեծ ծառայութիւն են  
մատուցել ընդհանուր Մուզիկային ևս. նրանք երաժշտական աշ-  
խարհին մատակարարել են Մեյքերէր, Անտօն և Նիկօլայ Ռու-  
բինսեյկներ, որոնք Ռուսաստանի առաջին կօնսերվատօրիաների  
հիմքը դրին Մոսկուայում և Պետերբուրգում, Մենդելսոն, Գալևի  
վերջին ժամանակներս այնքան աղմուկ հանող ֆենսովները՝  
Կիլի Զերրերօ և Եաշախէյֆից նոյնպէս հրէաներ են:

Նրանք այժմ ունին Պետերբուրգում հիմնած հրէական Մու-  
զիկայի և գրականութեան ընկերութիւն, որը գաւառներում ունի  
իւր հիւղերը: Այդ ընկերութեան կենդրոնական հիւղի նախաձեռ-  
նութեամբ այժմ ամեն տեղ համերգներ են տալիս և ծանօթաց-  
նում բոլորին իրենց Մուզիկայի հետ:

Այդ ազգն առհասարակ օժտուած է երաժշտական մեծ ըն-  
դունակութեամբ. և այդ այն պատճառով, որ նա բազմաթիւ դա-  
րեր շարունակ գործադրել է այն, ապրել, ուրախացել. սիրել  
տրամել և ամօքել է իւր վիշտը երաժշտութեամբ:

Արե. Տեր-Յովսէփեան